



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 345 -Ա/2

« 10 » Մարտի 2021 թ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՌԻՍՈՒՑԶԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԹԵՍԱԿՈՐՄԱՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Հիմք ընդունելով Կրթության և գիտության նախարարի՝ 2013 թվականի ապրիլի 15-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի օգոստոսի 2-ի N 1262-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 396-Ն հրամանը՝


Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել Հանրակրթական պետական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղը համալրելու մրցույթի անցկացման թեստավորման փուլի հարցաշարը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կրթություն» շաբաթաթերթի խմբագիր Գ.Մինասյանին՝ հաստատված հարցաշարը տպագրել պաշտոնաթերթի առաջիկա համարում:

3. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի մամուլի քարտուղար Գ.Մելիքբեկյանին՝ հաստատված հարցաշարը տեղադրել նախարարության պաշտոնական կայքէջում:
4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժ. Անդրեասյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

 Recoverable Signature

X 

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211